

կորները խիստ թափանցիկ կ'ըլլան ու գոյնզգոյն , բայց շատ բարակ ալ ըլլալնուն համար՝ այնչափ չեն գործածուիր՝ ինչպէս մէկալինը : Միտը շատ առողջարար ու զովացուցիչ է , մանաւանդ գէր եղած ատենը . զօրաւոր դեղ է բորի նման հիւանդութեանց դէմ , նաւորդներուն ալ շատ առողջարար , ու Աւրոպայի մէջ քիչ գրտնուելուն համար ալ շատ յարգի է , մանաւանդ Միգրիա , ուսկից նաւեր կ'երթան ինչուան հնդկաց ովկիանոսը՝ միայն աս կրիան բռնելու , ու կը բերեն ողջ ողջ Վոնտրա կը ծախեն ու մեծ վաստակ կ'ընեն :

Պատենակուռ ըսուած կրիան աւջինին հասարակ տեսակէն քիչ մը աւելի մեծ է . սովորաբար երկու հարիւր լիպրէ կը կշռէ , թէպէտ երբեմն ինչուան չորսհարիւր լիպրէ ծանրութեամբն ալ գտնուած է կ'ըսեն : Ասոր կռնրկի պատեանն ալ տասուիրեք հատ մթնագոյն ոսկորէ է , բայց ասոր պատենին կտորները հաստ են , ու մէկալինին պէս քովէ քով շարուած ըլլալու տեղը՝ կզմինտրի շարուածքին նման իրարու վրայ շարուած են , անոր համար պարբնակուռ ըսինք անունը : Այլի տեսակ կրիային գտնուած տեղերն աս ալ կը գտնուի , ու երկուքին ալ կերակուրը նոյն է . թէպէտ ասոր հաւկիթն աղէկ է , բայց միտը չուտուիր . ասոր պատենին ոսկորներէն կը շինեն զանազան տուփեր և ուրիշ գործիքներ ու զարդեր :

Կովային կրիաներն որսալու համար այլևայլ կերպեր կան : Հնդկաց ծովերուն մէջ աս կերպս կը բանեցընեն . եքինէիս կամ նաւակալ ըսուած պզտիկ ձկան վրայ օղակ մը կը կապեն երկայն չուանի մը ծայրը , ու անանկ ծովուն մէջ կը ձգեն . ձուկը որպէս զի ճար մը գանէ ան չուանէն ազատելու , կ'երթայ կրիային փորը կը մանէ . իր վրայի թեփերը կրիային ներսի գին սաստիկ կը կոչին ,

անանկ որ երբոր նաւավարները չուանը կը քաշեն՝ ձկան հետ մէկտեղ կըրիան ալ դուրս կուգայ : Այլ կերպը թէպէտ զուարճալի է , բայց այնչափ չգործածուիր : Արբեմն ալ կէտ կամ պալէնա ըսուած ձկան պէս ծովուն երեսը լողալու ատենը ձանկեր ձգելով կը բռնեն ու դուրս կը քաշեն . բայց ամենէն աւելի դիւրին կերպը՝ կրիաներուն ցամաք ելած ատենը բռնելն է : Այլ կրիաներուն էգերը հաւկիթ ձգելու համար երբեմն ինչուան վեց կամ եօթնհարիւր մղոն տեղ կը հեռանան ծովէն , ու աս ճամբորդութեանս մէջ իրենց համար աւազներուն մէջ լարուած չուանէ որոգայթներուն մէջ կ'իյնան : Ամենէն աւելի հոս դրուած պատկերին մէջ երեցած կերպովը լաւ կը յաջողի կրիային որսը , և պատկերը Վուպա կզզոյն աւազուտ ու անբնակ ծովափներէն մէկն է :

Որսորդները գիտնալով որ գարնան ատեն էգ կրիաները կ'երթան ցամաքը աւազներու մէջ հաւկիթնին թաղելու , որպէս զի դիւրութեամբ կարենան գործքերնին տեսնելու , պարզ ու լուսընկայ եղած գիշերներ կ'ընտրեն որսորդութիւննին ընելու : Ինչպէս որ պատկերին մէջ ալ կը տեսնուի , որսորդները վրայ կը հասնին , կրիաները կռնրկի վրայ կը պառկեցընեն , որով անոնք որչափ ալ ուզեն տեղերնէն չեն կրնար իյլտեղու . ետքը կը սկսին մէկիկ մէկիկ չուաններով կապել ու առ 'ի շեղ տախտակի մը վրայէն քաջբըշելով սայլերուն վրայ կը հանեն , և ողջ ողջ ինչուան հեռու երկիրներ կը տանին :

Հ Ա Ն Ե Լ Ո Ւ Կ

Շուռըն ծախէ , գընողըն վախէ ,
Գործածողն ոչ ճանաչէ :

ՄԱՐՏԻ ՀԱՆԵԼՈՒԿՆ ԷՐ ԳԼՈՒԽ :